ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.10.2014թ.
224-ի 1

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Երեւան քաղաքում կառուցվել են եւ շարունակվում են կառուցվել վերգետնյա անցումներ: Շատ դեպքերում, վերգետնյա անցումներն արագընթաց երթեւեկություն (70-80կմ/ժամ) թույլատրող փողոցները հատելու միակ միջոցն են: Սակայն, վերգետնյա անցումները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող (անվասայլակից օգտվող) քաղաքացիների կամ դրանք մանկասայլակով անցնելու համար, (օրինակ, չկան թեքահարթակներ, որոնցից վերանշյալ քաղաքացիները կարող ենք ինքնուրույն օգտվել):

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ճարտարապետական նախագծման (կառույցի տեսքը սահմանող փաստաթղթերի եւ չափանիշների) հիման վրա են կառուցվել եւ կառուցվում վերգետնյա անցումները: Խնդրում ենք տրամադրել համապատասխան փաստաթղթերի պատճենները,
2. Ինչու՞ վերգետնյա անցումները կառուցելիս չեն նախատեսվել թեքահարթակներ կամ հնարավոր այլ պայմաններ՝ անվասայլակով կամ մանկասայլակով փողոցն անցնելու համար,
3. Նախատեսվու՞մ է արդյոք վերակառուցել վերգետնյա անցումները հաշմանդամություն ունեցող (անվասայլակից օգտվող) անձանց կարիքներին եւ դրանք մանկասայլակով անցնելուն հարմարեցնելու համար, ինչպես նաեւ հաշվի առնվա՞ծ են վերոնշյալ անձանց կարիքները վերգետնյա նոր անցումներ կառուցելու դեպքում (այժմ կառուցվող անցումների դեպքում),
4. Եթե այո, ապա ե՞րբ է նախատեսվում վերգետնյա անցումների վերակառուցումը,
5. Եթե ոչ, ապա խնդրում ենք սույն գրությունն ընդունել որպես դիմում եւ անդրադառնալ բարձրացված խնդրին:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց

հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան